№ 165 Սեպտեմբերի 28 (Հոկտեմբերի 10) 1879 Սեպտեմբերի 28 (Հոկտեմբերի 10) № 165

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչպէս են նայում մեզ վրա։—Ներքին տեսութիւն։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Սանահնից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիոյ վիճակը։—«Մշակի» հեռագիրներ։

## ԻՆՉՊԷՍ ԵՆ ՆԱՅՈՒՄ ՄԵԶ ՎՐԱ

Դուցէ բացի ժամանակակից հրէաներից և յոյներից ոչ մի ազգութեան մասին օտարները այնքան վատ կարծիք չունեն, որքան ժամանակակից հայերի մասին։

Այդ երևոյթը, ի հարկէ իր պատճառները պէտք է ունենայ։

Կան, ի հարկէ, բացառութիւններ և օտարների մէջ, կան նրանց գիտնականների, ճանապարհորդների մէջ և այնպիսիներ, որոնք իրանց գրուածներում գովասանքով են խօսում հայերի մասին։ Բայց դրանք շատ փոքր թիւով են։

Մենք կրկնում ենք այդ երևոյթը պէտք է իր պատճառներն ունենայ...

«Մշակը» իր գոյութեան ութ տարվայ ընթացքում իր գործունէութեան նպատակներից մինը դրել էր հետազօտել այդ անմխիթար երևոյթի պատճառը։

Եւ ճշմարիտ, եթէ անկողմնապահ կերպով հետազօտենք ժամանակակից հայոց ազգի բնաւորութիւնը, կը համոզվենք որ այդ ազգը շատ համակրելի չէ։ Զը նայելով որ հայերը շատ խելացի, ընդունակ և աշխատասէր ժողովուրդ են, գուցէ և հանճարեղ ազգ են, նրանք ունեն մի և նոյն ժամանակ այնպիսի զզուելի յատկութիւններ, որոնք անշուշտ ատելի են դարձնում նրանց օտարազգիների աչքում։

Հայոց ընտանիքը բռնաւորական սկզբունքի վրա է կայանում, ժամանակակից հայը նախանձոտ, վրէժխնդիր, հալածող, հարստահարող է, նա վերին աստիճանի մոլեռանդ է, հայերը միմեանց մէջ անմիաբան են, թէև օտարներին հաւատարիմ և հնազանդ են, բայց մի և նոյն ժամանակ պատրաստ են փոխադարձապէս միմեանց խեղդել, ոչնչացնել.... Հայը ոչ ոքին այնքան մեծ ուրախութեամբ չէ հարստահարում և հալածում, որքան նոյն իսկ իր հայրենակցին, հային....

Եւ ահա ութ տարի շարունակ մենք մեր հայրենակիցներին քննադատում, մտրակում, մերկացնում էինք, մեր չորս կողմը եղած ամեն տգեղ երևոյթները գարկում, հարուածում, քանդում էինք....

Հետևանքը ի՞նչ եղաւ։ Այն որ մենք սաստիկ շատ թշնամիներ ճարեցինք։ Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Միթէ մենք այդ չէինք սպասում։ Միթէ մենք կարող էինք հայի կողմից մեր վերաբերութեամբ քնքոյշ սէր պահանջել, երբ մենք էլ մեր կողմից, երբէք նրան քնքոյշ սէր չէինք ցոյց տալիս, երբէք նրա ոչ մի պակասութիւնը չէինք խնայում։

Դա մեր խորին և ամենաանկեղծ համոզմունքն է որ մենք ուրիշ կերպ չէինք կարող և չը պէտք է վարվէինք։

Օտարները ժամանակակից հայի մասին գրեթէ նոյնչափ վատ կարծիքի են, որչափ ժամանակակից յոյնի և հրէայի մասին։ Ուրեմն ինչպէս պէտք է անենք մենք որ օտարները փոխեն մեր մասին իրանց կազմած կարծիքը. միթէ մենք այդ հետևանքին կարող ենք հասնել ծածկելով նրանց առջև մեր մէջ արմատացած պակասութիւնները և հնարելով մեր մասին զանազան գովասանքներ։ Դորա հետևանքը ի՞նչ կը լինէր. մենք կը մնայինք նոյն փչացած և օտարների համար նոյն ատելի, զզուելի ազգութիւն,—և ինքներս էլ երբէք չէինք ուղղվի մեր խոշոր պակասութիւններից....

Մենք աւելի լաւ համարեցինք նոյն իսկ մեր ազգի պակասութիւնները խիստ և անխնայ քննադատութեանը ենթարկելու։ Դորանով մենք, ճշմարիտ է, չը վաստակեցինք մեր հայրենակիցների համակրութիւնը, բայց մեր բռնած ընթացքը այն օգուտը կունենայ, որ ժամանակով ազգը կուղղվի և ուրեմն կը կարողանայ իր վրայից փարատել այն աննախանձելի կարծիքը, որ ունի նրա մասին օտարը։

Թող հայերը մեզ ատեն, բայց մենք այն մխիթարութիւնը կունենանք, որ գոնէ ժամանակով օտարը չի ատի հային։

Մի բժիշկ, որ տալիս է իր խնամքին յանձնված հիւանդին մի դառն խմիչք, կամ մի կծու և այրող դեղ, արդէն առաջուց շատ լաւ գիտէ որ հիւանդը կը չարչարվի, կը գոռայ, աղաղակներ կը գցէ, կանիծէ, դուցէ ատելով կատէ իր բժշկին,—բայց բժշկի խղճմտանքը մաքուր է, որովհետև նրա նպատակն էր նպաստել հիւանդի առողջանալուն։

Դորան նման է և հրապարակախօսի, լրագրողի պաշտօնը և կոչումը։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

22 սեպտեմբերի

Խնդրեմ տեղ տաք հետևեալ տողերին, որոնք վերաբերվում են Նոր Արշալոյս դպրոցի և նորա հոգաբարձութեան, պ. Եղիշէ Մեծատունեանցին։

«Նոր-Արշալոյս» ուսումնարանը իբրև առաջինը և սկզբնապատճառ է իգական սեռի դաստիարակութեան Ախալցխայում, հոգաբարձական ընտրութեան վերաբերութեամբ էլ առանց կարծեաց։ Միակ արտօնութիւն վայելող դպրոցն է հոգևոր բարձրագոյն իշխանութեան կողմից, և այս կարծեմ մեծ գովեստից արժանի է քան թէ նախանձախնդիր արհամարհանաց։

Երկրորդ. նորա կառավարիչը ոչ թէ պ. Ե. Մեծատունեանն է, այլ պ. Ռափայէլ Սաղաթելեանցը (ինչպէս և հիմնադրին էլ նոյն իսկ անձն է.) բայց հոգաբարձական պաշտօնը յանձնված է Մեծատունեանցին, 1872 թ. դեկտեմ. ամսից, առանձին կոնդակաւ Նորին Վեհ. Օծութեան, ուրեմն, նա, Մեծատունեանցն ոչ անփոփոխ Ատուած է մնացել, և ոչ էլ հոգաբարձու 10—12 տարի շարունակ, այլ մի և նոյն 1872 թուականից սկսել մինչև առաջիկայ 1880 թուականը, դեռ նոր պիտի քայլափոխէ ինքներդդ տարվայ շրջանը. և այս պաշտօնը ոչ թէ Մեծատունեանցը ինքն միայն է վարում, այլ նորա հետ կային ընտրված այլ ևս 4 անձինք,—Յովհաննէս աւագ քահանայ Առվանեանց (այժմ վախճանված), մեծ. մահտեսի Վարդան աղա Վարդանեանց, կապիտան պ. Մկրտիչ Վարդապետեանց (բացակայ). և Յովակիմ աղա Ղազումչի Պաշեանց, որը Մեծատունեանցի հետ իմիասին յօրէ անտի մինչ ցարդ, շարունակում են իրենց պաշտօնը։

Երրորդ. Սուքիաս եպիսկոպոս Պարղեանցը, ոչ թէ միայնել կուզէր Նոր-Արշալոյսը Եղիսաբէթեանի հետ, այլ նորա ցանկութիւնն էր ջարդել և փչրել Նոր-Արշալոյսի հիմունքը ու խարիսխը որ և չը յաջողվեցաւ...և թէ ինչպէս յայտնի չէր, որ Նոր-Արշալոյսը 1872 թուականից ենթարկված էր հոգևոր վարչութեան։ Եւ ի վերջոյ Նորին Վեհափառութիւնը ժողովրդեան և հիմնադրի խընդիրն յարգելով վճռեց տալ նոյն ուսումնարանին եկեղեցական տեղական գումարից տարեկան նըպաստ 540 ռուբլ, և այս նպաստի մասին ոչ թէ ընդհանուր ժողովուրդը, այլ մի քանի չարախորհուրդ չար լեզուներ, և նոյն իսկ տեղական հոգևոր կառավարութեան յայնժամեան նախագահները—Պարզեանցը և տեղական եպիսկոպոսները ինչպէս և նոյն ինքն Տէր-Ստեփանեանցը. բայց ի վերջոյ որպէս Կաթուղիկոսի վճիռ ամենքն էլ, չարն ու բարին ի միասին, հնազանդեցան և պատուեցին Վեհափառի հրամանը, Նոր-Արշալոյսը 1875 թուականից ստացաւ իր թոշակը, իւրաքանչիւր տարի մատուցանելով իր հաշին թեմական իշխանութեան։ Ժամանակ անցնելուց յետոյ գերապատիւ Գրիգոր եպիսկոպոսի ներկայ յաջորդութեան ժամանակ, ոչ թէ նրա միջնորդութեամբ, այլ թեմական տեսչի՝ Տէր-Յովհաննիսեանցի և Գաբրիէլ սրբազանի որոշմամբ վճռվեցաւ տալ եկեղեցական կապալաղրամից նոյն դպրոցի պահպանութեան համար տարեկան այլ ևս 664 ռ. 98 կ., և ոչ թէ 1000 ռուբլ։

Չորրորդ՝ այս նպաստների վրա ոչ Գրիգոր եպիսկոպոս Սաղինեանցի, և ոչ էլ ուրիշի միջնորդութեամբ աւելացած է եկեղեցական գումարից տարեկան նպաստ այլ ևս 1400 ռ. իբրև նոյն դպրոցի պարտքը տալու նպատակաւ. մինչդեռ, յիշեալ ուսումնարանը ոչ մի ժամանակ այդքան մեծագումար պարտուց տակ ընկած էր, և ոչ էլ այսուհետև յոյս կայ ընկնելու, բայց այս գործին բուն էական կետն այս է, որ 1400 ռուբլ գումարը Նոր-Արշալոյսի հոգաբարձութիւնը ապառիկ հանեց վիճակային իշխանութեան վրա իրանց նոյն պաշտօնի մէջ հաստատած օրից մինչև այն թուականը որ 540 ռուբլի տալը դադարեցուցել էր. ուստի թեմական առաջնորդը և ըստ գրութեան պ. Տէր-Յովհաննիսեանցի հոգաբարձութեան արդարացի պահանջը չը կարողանալով մերժել, որը հիմնված էր ի վրա սրբազան կոնդակի Վեհափառին և հրամանագրութեանց Սինոդին Ս. Էջմիածնի, եզրակացութիւն արաւ, որ յիշեալ 1400 ռուբլի գումարից տրվի հոգաբարձութեանը իւրաքանչիւր տարի 250 ական ռուբլ և այսպէս էլ կը շարունակվի 1878 թուականից սկսեալ։ Բայց տակաւին գալով Ն. Մեծատունեանցի թէ գիտութեան, թէ մանկավարժական օրինաւոր հմտութեան, և այլ և այլ բնական և բարոյական արժանեաց վրա արդարև խոստովանում եմ, որ նոքա յայտնի են Ախալցխայի ամբողջ հասարակութեան բացի նորա հակառակորդներից։ Մեծատունեանցի ուսումնական և բարոյական արժանիքն ճանաչած են, թէ գրաւոր կերպով, և թէ անձամբ անձին տեսակցելով, ինչպէս գիտնական Ստեփաննոս Եսայեան Նազարեանցը որը մինչև իր կենաց վերջին օրը թղթակցում էր պ. Մեծատունեանցի հետ, որոյ գրութիւնք մի օր գուցէ հրատարակվին «Մշակի» թերթերով, նոյնպէս և նոյն ինքն գեր. Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանցը ոչ ապաքէն հարիւրաւոր նամակներով վկայած և գովաբանած ունի զՄեծատունեանցը և մի ամիս աւելի էլ անցեա 1871-ի ս. Էջմիածնի մէջ անձամբ անձին զանազան նիւթերու վրա խօսած, վիճած և քննաբանութիւն արած ունէր, ինչ ժամանակ Վեհափառ Հայրապետի ընտրութեամբն կարգեցան ուսուցիչ հայերէն լեզուաց սուրբ Էջմիածնի յայնժամեան ճեմարանում. աւելորդ ենք համարում յիշել նաև ուրիշ երևելի գիտնականներից ստացած վկայութիւնքը...

Մի քանի անձինք միայն սովոր են Ախալցխայում իրանց կարողութիւնից դուրս դերեր խաղալ և դժգոհութիւններ յարուցանել հասարակութեան մէջ, դայթակղեցուցանելով զժողովուրդը. ապա թէ ոչ, հասարակութիւնը օրինաց, և իր հոգ. և մարմնաւոր իշխանութեան միշտ հլու և հնազանդ է գտնված, մանաւանդ որ, երբեմն, Նոր-Արշալոյսը իր դրամական փոքր նպաստութեամբ մրցումել էր յառաջադիմութեան և այլ բարեկարգութեան կողմից Եղիսաբեթեանի և Կարապետեանի այնքան մեծագումար ծախուց և ուսումնական ընթացից հետ. և այս մասին իրաք էլ արժանի եղած էր Նորին Օծութեան առանձին հովանաւորութեան և օրհնութեան կոնդակներու. և ահա, այս զգալի յառաջադիմութիւնն էր պատճառ, որ չարանում էին Նոր-Արշալոյսի վրա։

Իսկ ինչ որ վերաբերում է Նոր-Արշալոյսի

հողաբարձութեան իրաւացի գանգատներին, որ տուած են գեր. Առաջնորդի, և նախկին թեմական վերատեսչի օրինազանցութեանց մասին առ Սինոդն ս. Էջմիածնի, ուրիշ անգամին կը բացատրեմք։

***

## ՆԱՄԱԿ ՍԱՆԱՀՆԻՑ

18 սեպտեմբերի

Վերջին ժամանակներս Սանահնու ուսումնարանը կարելի է ասել առաջինն էր ամբողջ Լոռնահանգում, չը նայելով որ Շուլավերը, Ջալալօղլին որոնք չատ և չատ մեծ են Սանահնուց, այնու ամենայնիւ գալիս էին այն գիւղերից ուսանելու Սանահին։

Մանաւանդ աշակերտաց բազմութիւնը այն ժամանակն էր, երբ ունէր ուսումնարանը ռուսաց լեզուի ուսուչից և կար մօտաւորապէս 80 աշակերտ։

Պէտք է խոստովանված որ պ. ուսուցիչը աղնիւ բնաւորութեան տէր երիտասարդ էր, սակայն վարդապետների նրա հետ կոպտութեամբ վարվիլը այնքան զզուացրին նրան, որ նա չը կարողացաւ կենալ մի անբողջ տարի։ Նրա գնալուց յետոյ մի քանի բարեսէր անձինք կրկին աշխատում են մի ուսուցիչ բերել, և խոստացել են իւրաքանչիւր տարի տալ 200 ր., իսկ այժմ չէ կարելի 200 ր. ուսուչից գտնել. իմ կարծիքով կարելի է մի այլ միջոց գործ դնել, տարեկան ուսուցչի ռօճիկը լրացնելու համար՝ յետ ձգել այն բոլոր նուէրները, որոնք տրվում են Խաչափայտ վեր բերելու ժամանակ յօգուտ վանքի։ Վերջացնելով նամակս, դարձնում եմ վանահօր ուշադրութիւնը այս հարցի վրա և խորհուրդ եմ տալիս վանականներին չը վարվել ուսուչիչների հետ այնպէս, ինչպէս վարվել են անցեալ վանականները, իսկ եթէ կը վարուեն այնպէս, ես կարծում եմ որ ոչ մի ուսուցիչ չէ կարող կենալ այդ տեղ։

Լ. Լոռեցի

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մօսկվա, 8 սեպտեմբերի

Խնդրեմ հաճեցէք ընդունել նամակիս մէջ ծրարեալ չորս հարիւր յիսուն և հինգ (455) ռուբլին «Արարատեան» ընկերութեան գանձանակումը և տպագրել ձեր «Մշակի» մէջ նուիրատուների անունները։ Դաւիթ Աղամեանց 10 ր., Սողոմոն Աթանասեանց 20 ր., Յակոբ Վարդազարմեանց 25 ր., Յովհաննէս Յովնանեանց 100 ր., Գէորգ Լիանազեանց 50 ր., Սարգիս Ջանումեանց 50 ր., Տիրան Էքիզէր 10 ր., Աղդէաս Միրզաբէկեանց 10 ր., Եղբարք Ժամհարեանք 50 ր., Թակիրեան և եղբ. Սարգսեանք 20 ր., Գրիգոր Ճգնաւորեան 10 ր., Ա. Մկրտումեան 5 ր., Գէորգ Քանանեան 10 ր., Յակոբ Խլրտճիեանց 50 ր., Սող. Մեհրապետեանց 25 ր., Խաչանեան 10 ր.։

Աւագ քահանայ Յակոբ Սուրենեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց «Голосъ» լրագիրը իր 259 համարում տպել է մի երկար թղթակցութիւն Թիֆլիսից, որի մէջ թղթակիցը խօսում է Անդրկովկասի ուսումնարանական գործի մասին և նամակի վերջը ասում է։ «Երբ ստորին և միջնակարգ դպրոցների գործը բաւական առաջ մղված կը լինի, առաջին հերթական խնդիրը, որ լուծումն կը պահանջի, կը լինի կովկասեան համալսարանի խնդիրը։

—

ՄԵՆ-ՂԱՐԱԲԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են, որ սեպտեմբերի 14-ին Ղարաքլիսայի հասարակութիւնը խառն բազմութեամբ գիմեց պ. Ղորղանեանց անտառապետին, վերջին անգամ ևս փայտի իրաւունքը խնդրելու։ Բայց պ. անտառապետը բոլորովին մերժելով հասարակութեան անհրաժեշտ խնդիրը, կուրծքին ձեռքով զարկելով և իւրաքանչիւր խօսքի վրա չէշտելով, ասաց. «ես այս պաշտօնից բոլորովին ձանձրացած, կամենում էի չուտով հրաժարականս տալ, բայց այսուհետև ձեր ջիգրու մինչև տաս տարի պէտք է այստեղ մնամ և իմ ուզածն անեմ։» Բազմութիւնը յուզված վերադարձաւ անտառապետի մօտից։ Հասարակական ժողով կազմեցին և գրեցին երկու խնդրագիրներ. մինը ուղարկեցին կովկասեան փոխարքայի գլխաւոր վարչութեան կառավարչին, իսկ միւսը Երևանի նահանգապետին։ Ղարաքլիսեցիները մեծայոյս են, որ ժողովրդի արտասուքը առանց ուշադրութեան չի մնայ։

—

Ինչպէս յայտնի է սեպտեմբերի 16-ին ՄՕՍԿՎԱՅԻ հայերը տօնեցին Իրանց Ս. Խաչ եկեղեցու հարիւրամեայ յօբելեանի հանդէսը։ Այդ հանդէսի մասին մենք ստացած ունինք մի յօդուած, որ և կաշխատենք տպագրել մեր թերթի մէջ։

—

Մեզ հաղորդում են ՋԱՔԱԹԱԼԻՑ, որ այնտեղի վաճառականների գործակալների դրութիւնը շատ վատ է։ Գործակալները ծառաների պաշտօն են կատարում։ Ազատ ժամանակ գործակալը իր մասնաւոր գործով չէ կարող պարապել։ Մի գործակալ փչացրել էր իր տիրոջ երկու կօպէկանոց արկղ լուցկին։ Այդ յանցանքի համար գործակալը այն դրութեան էր հասցրած, որ կամեցել էր անձնասպանութիւն գործել։

—

Խմբագրութեան մէջ ստացվեցան մի քանի նամակներ, որոնցով գաւառացի մեր բաժանորդները շնորհակալութիւն են յայտնում մեր տաղանդաւոր աշխատակից պ. Բաֆֆիի «Ոսկի աքաղաղ» վէպը տպելու համար։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի մի քանի քահանաներ սկսել են վաճառականութեամբ պարապել։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ՎԻՃԱԿԸ

(Շար. և վերջ)

«Նոյնպէս, Դամասկոսի Անգղիական փոխ—հիւպատոսը կը տեղեկագրէ թէ այդ քաղաքն՝ ինչպէս նաև ընդհանուր կերպիւ Սուրիոյ ներսերն՝ երկար ժամանակէ ի վեր վարչական անիշխանութիւն և զօշաքաղութիւն կը տիրեն, և Միտհաթ փաշան այդ չարեաց դիմագրաւելու չափ զօրութիւնը չունի։ Մեճլիսներն, այսինքն տեղական ատեանները զօշաքաղութեամբ ապականեալ մարմիններ են միայն, թէև, ինչպէս որ փոխ-հիւպատոսը կը դիտէ, իրենց անձնական շահուց համար արդարութիւնը նենդելու և ապարդիւն թողլու մասին այդ ատենից անդամներուն ցուցած հանձարն ու ճարպիկութիւնը կը հաստատեն թէ Սուրիոյ մէջ գոնէ կարող պաշտօնատարք չեն պակսիր, միայն թէ իրենց կարողութիւնը զէշի կը գործածեն, և թէ իրենց վրա ազդու հսկողութիւն մ'ի գործ դնել հարկ է, որպէս զի այդ կարողութիւնը չարաչար չը գործածուի, այլ պատշաճ և օգտակար ուղղութեան մը մէջ գործածեն։

«Սակայն, ինչպէս կը զրէ Թրօթթը հազարապետն ուրիշ նահանգի մը նկատմամբ, Մեճլիսները փաշայէն անկախ ընելով և այսպէս գործադիր և դատական պաշտօններն իրարմէ զատելով մեծ բարւոքում մը չը կրնար յուսացուիլ։ Փաշան կրնայ պարկեշտ անձ մը լինել, և յայնժամ կրնայ մեճլիսներուն վրա հսկողութիւն 'ի գործ դնել. բայց մեճլիսը դրեթէ միշտ զօշաքաղութեամբ ապականեալ է, և աւելի դժուար է բազում անձանց վրա ազդեցութիւն բանեցնել քան թէ միակ մէկ անձի վրա։ Փոքր-Ասիոյ մէջ աչքերնիս որ կողմ ալ դարձնեմք, անիշխանութեան, զօշաքաղութեան և կամ անհոգութեան մի և նոյն պատկերը կը պարզուի մեր առջև։ Եթէ մինչև իսկ ազդու և արդարակորով փաշա մը նահանգի մը կուսակալ անուանի, իւր բարի դիտաւորութեանց առջև ամեն վայրկեան արգելքներ կը տեսնէ Կ. Պոլիս դիմելու հարկին պատճառաւ, և ինչպէս որ Յոնաղի օրերն Հռոմի մէջ էր, Կ. Պոլսոյ մէջ ամեն ինչ իւր գինն ունի, և այն ալ բարձր գին մը։

«Ցարակոյս չը կայ թէ այս վիճակը տխուր է, բայց միանգամայն կը ցուցնէ թէ որ կողմ վնտռելու է պէտք եղած դարմանը։ Փոքր-Ասիոյ վիճակն ոչ այնչափ կամաւորապէս և դիտմամբ գործուած հարստահարութիւններ և յոռի վարչութիւն կը ներկայէ մեր առջև, որչափ անզգայական և կրաւորական անկման վիճակ մը։ Վատթարացման շարունակ յառաջդիմութիւն մը կայ, որոյ վրա կգտնուի դէպք վերջին ժամանակներս հասարակաց ուշադրութիւնն հրաւիրեցին։ Պատմութիւն և աստաբանութիւն գիտնալու հարկ չը կայ հասկնալու համար թէ անկման վիճակի մ'առաջքն առնելու չափ դժուարին բան չը կայ։ Սակայն Թուրքիոյ կառավարչական դասուն բոլոր անդամներն ալ զօշաքաղութեամբ վարակեալ և կամ անհոգ չեն։ Անհատապէս յաճախ լաւ դիտաւորութիւններ ունին, թէև ազդուութիւն և նախաձեռնութիւն կը պակսին իրենց, և ըրած ջանքերնին միշտ ապարդիւն կը մնան՝ Կ. Պոլսոյ անդամալուծիչ ազդեցութեան պատճառաւ։ Փորձառութիւնը կը հաստատէ թէ Թուրքիոյ ամենալաւ կերպիւ կառավարուած մասերն անոնք են, ուր Եւրոպական ազդեցութիւնն ամենէն աւելի զգալի է։ Դամասկոսի Փոխ—հիւպատոսին տեղեկագրաց նայելով, Պէյրութի, Երուսաղէմի և ընդհանուր կերպիւ Պաղէստինի մէջ համեմատական բարգաւաճման և բարեկեցութեան Օվասիսներ կը գտնուին՝ ընդհանրապէս Սուրիոյ մեր աչաց առջև ներկայած անիշխանութեան անապատին մէջ։

«Այս վիճակն հիւպատոսական զօրաւոր մարմնոյ մը ներկայութեան կը վերագրուի, որ օտարազգի ժողովրդեան շահուց կը հսկէ և յորմէ ամբողջ երկիրն ալ անուղղակի կերպիւ օգուտ կը քաղէ։ Ուրեմն հոս միջոց մը կայ Փոքր—Ասիան տառապեցնող անկման վիճակն յաջողութեամբ կասեցնելու։ Ինչպէս որ Սիրը Հէնրի Տրրմմընտ Ուօլֆ կըսէ, ապակեղրոնացման կատարեալ գրութենէ զատ ուրիշ միջոցաւ փրկութիւն չը կրնար գտնել Օսմանեան տէրութիւնն։ Եթէ վարչութեան գլուխն արդարակորով կառավարիչք գտնուին, որք իրապէս անկա՛ դիրք մ'ունենան և փորձառութեան ու կարողութեան տէր Եւրոպացի խորհրդականաց օգնութեամբ գործ տեսնելու համար հրահանգ տրուի իրենց, չը կայ պատճառ մը թէ Փոքր-Ասիա ինչու համար շուտով չը փրկուի իւր արդի ողբալի վիճակէն։ Երկրին հարստութեան աղբիւրներն ու սերմերը մեծ են, ինչպէս որ իւր նախկին բարգաւաճումքն է։ Բայց ուր որ ոչ ձեռնարկութիւն, ոչ պաշտպանութիւն, ոչ ալ կենաց և ընչից ապահովութիւն կան, այդ սերմերն ապարդիւն կը մնան, և չարիքն անգամ մը հաստատութիւն գտնելէ ետև, նոյն իսկ երկրին կեանքը կը կրծէ։

«Այժմ լաւագոյն ժամանակաց սկզբնաւորութիւն մ'եղաւ Անգղիական հիւպատոսաց անուանումն, որք ընդարձակ իշխանութիւններ ունին՝ ոչ այնչափ իբրև հսկողութիւն, այլ իբրև խորհրդատուութիւն, և Դուռն՝ իւր հանդիսապէս ստանձնած պարտականութիւններէն յետոյ, մեծ դժուարութիւն պիտի ունենայ այդ հիւպատոսաց խորհուրդներուն չանսալու։ Հիւպատոսական տեղեկագիրք խիստ բացորոշ կերպիւ կը յայտնեն երկրին արդի վիճակը. բայց միանգամայն կը յայտնեն թէ պակաս չեն այնպիսի կառավարիչք, որք իրենց ձեռքէն եկածն ընելու փափաք ունին, և աւելի տգիտութեան և անզօրութեան պատճառաւ, չեն կրնար աղէկ բան մ' ընել, քան թէ դժկամակութեան պատճառաւ։ Իրաւ է որ կատարուելիք գործը դժուար է. բայց գոնէ անկարելի չէ՝ եթէ Դուռը լրջօրէն ջանք մ'ընէ իւր խոստումները գործադրելու։ Այս ջանքն արժան է ընել, և մինչև իսկ եթէ այդ ջանքն 'ի դերև ելնէ, խնդիրը դարձեալ որ և է տեսակ լուծում մը պիտի պահանջէ։ Մեք չեմք կրնար անտես ընել Փոքր-Ասիան մինչև իսկ եթէ ուզենք անտես ընել. չեմք կրնար Փոքր-Ասիան մեր վրայէն նետել, և մինչև անգամ մինակ թողուլ զայն։ Ուստի ժամանակ է փորձելու թէ արդեօք չեմքկարող վերածնութիւն տալ այդ երկրին։ Յաղթելու միակ բանն այն կրաւորական դիմադրութիւնն է որ Թուրք կառավարութեան ամենաքնքիր և ամենազօրաւոր զէնք մ'եղած է։ Բայց Փոքր-Ասիոյ վիճակին նկատմամբ մեր ստացած տեղեկութիւնները՝ Դրան վրա աւելի զօրաւոր ճնշում մը բանեցնել կը թոյլատրեն մեզ։ Այդ ճնշման կարելի է դէմ դրուի. ինչպէս որ ասկէ առաջ դէմ դրուեցաւ. բայց եթէ այդպիսի ընդդիմութիւն մը տեղի ունենայ, այժմ աւելի քան երբէք բացայայտ իրողութիւն մ'է, որ այն ժամանակ անխուսափելի աղետի մ'ըսպասել պէտք պիտի լինի, որ ամեն վերակենդանութիւն անկարելի պիտի ընէ։»

(Մասիս)

# «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԿՐԱԿՕՎ, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի։) Կրաւօվկիի յօբէլիանի առիթով Վ. Լամանսկիից ստացած հեռագիրն այստեղ շատ ախորժելի տպաւորութիւն գործեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 սեպտեմբերի։ «Русская Правда» լսել է, որ գաղտնի տպարան գտնելու միջոցին, 20 հոգի են կալանաւորված, որոնցից 3-ը կանայք են։ Սեպտեմբերի 24-ին այստեղ վախճանվեցաւ բազմաթիւ բեմական գրվածների հեղինակ հռչակաւոր վոդեվիլիստ Պեսար-Անդրէէվիչ Կարատիգին։ Հանգուցեալը բարեկամական յարաբերութիւններ ունէր Գրիբոյեդովի հետ։

ԲԵՐԼԻՆ, 24 սեպտեմբերի (6 հոկտեմբերի։) Ս. Պետերբուրգի Ֆրանսիական դեսպան Շանզի երէկ երեկոյեան ընդունելութիւն գտաւ Բիսմարկի մօտ. այսօր երեկոյեան նա ուղևորվում է Ս. Պետերբուրգ։

ԲԵՐԼԻՆ, 26 սեպտեմբերի (8 հոկտեմբերի։) 433 ընտրութիւններից յայտնի են 418, այս ընտրվածներից 111-ը պահպանողականներն են պատկանում, 92-ը անդամ են կենտրոնական կուսակցութեան, 90-ը պատկանում են ազգային ազատամիտ կուսակցութեան, 5-ը ազատամիտ կուսակցութեան են պատկանում, 4-ը չափաւոր ազատամիտներին, 43-ը ազատ պահպանողականներին են պատկանում, 34 յառաջադէմ կուսակցութեան, 19-ը լեհացիներ, 4 մասնաւորներ, 1 ռամկապետական և 13 անձ նաւորութիւններ, որոնք յայտնի չէ թէ ինչ կուսակցութեան են պատկանում. ընտրեալների թիւում կան հետևեալ մինիստրները. Կամկէ, Գիտտէր, և նախկին մինիստր Ֆալկ, Գոբրէխտ և Ֆրիդէնտալ։

ԲԷԼԳՐԱԴ, 26 սեպտեմբերի (8 հոկտեմբերի։) Պոլեակովի Ռուսական ընկերութիւնը ներկայացրեց այն առաջարկութիւնը, որի դիտաւորութիւն է սկսել սէրբիական երկաթուղիների շինութիւնն առանց կառավարութեան երաշխաւորութեան։

ՓԱՐԻԶ, 26 սեպտեմբերի (8 հոկտեմբերի։) Ֆրանսիական մինիստրների խորհրդարանն այսօրվայ նիստում զբաղվեցաւ թողութեան հարցով. վճռեցին, որ այս գործի վերաբերութեամբ պալատի վճռի դէմ ոչինչ փոփոխութիւն չանեն։

ՎԻԵՆՆԱ, 25 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) «Neue Frei Presse» լրագրին հաղորդում են Լօնդօնից, որ բրիտանական մինիստրութիւնը, Եւրոպայի հարաւարևելքում մի քանի նշանաւոր մեքենայագործութիւնների առիթով, սաստիկ մտատանջութեան մէջ է ընկել։ Բիսմարկի Վիէննայի այցելութենից ի վեր, անգլիական դիպլոմատիան այնպիսի երանդուն յուզմունք է ցոյց տալի, որպիսին նա ցոյց էր տալի միայն Սան-Սանֆանեան դաշնագրի ստորագրելու ժամանակ։ Լատ երևութին Անգլիայի կողմից մի անակնկալ դէպք է սպասվում։ «Pester Lloyd» լրագիրը լսել է, որ իբր թէ սուլթանը մի նամակ է ուղարկել Ֆրանց-Յովսէփին, որի մէջ սուլթանն առաջարկում է կայսրին Թիւրքիայի և Աւստրիայի մէջ դաշնակցութիւն կապել։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Дозволено Цензурою 27 Сентября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона